ՏԵՂԵԿԱՆՔ

«ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ~~ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ~~ ՈՒ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

~~Հոդված 1. «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» 2002 թվականի նոյեմբերի 20-ի N ՀՕ-465-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի «մշակութային բարիքներ՝ իրավաբանական եւ ֆիզիկական անձանց կողմից բնակչության մշակութային պահանջմունքների բավարարման նպատակով մատուցվող մշակութային ծառայություններ եւ իրացվող մշակութային արտադրանք (ապրանքներ).» հասկացությունից հետո լրացնել հետեւյալ հասկացությունը.~~

~~«մշակութային կազմակերպություն՝ կազմակերպություն, որի ստեղծման հիմնական նպատակը մշակութային գործունեության իրականացումն է.»։~~

~~Հոդված 2. Օրենքի 6-րդ հոդվածի «մշակութային ոչ առեւտրային կազմակերպություն» հասկացությունը շարադրել հետեւյալ նոր խմբագրությամբ.~~

~~«մշակութային ոչ առեւտրային կազմակերպություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից ստեղծված մշակութային կազմակերպություն, որի գործունեությունը բխում է պետության կամ համայնքի կողմից իրականացվող մշակութային քաղաքականությունից եւ ռազմավարությունից.»։~~

~~Հոդված 3. Օրենքի 6-րդ հոդվածի «մշակութային գործունեությամբ զբաղվող անձ» հասկացությունում «մշակութային կազմակերպությունում» բառերից հետո լրացնել «կամ մշակութային ոչ առեւտրային կազմակերպությունում» բառերը։~~

Հոդված 1. «Մշակութային օրենսդրության հիմունքների մասին» 2002 թվականի նոյեմբերի 20-ի N ՀՕ-465-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածում՝

1) «մշակութային բարիքներ՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից բնակչության մշակութային պահանջմունքների բավարարման նպատակով մատուցվող մշակութային ծառայություններ և իրացվող մշակութային արտադրանք (ապրանքներ).» հասկացությունից հետո լրացնել հետևյալ հասկացությունը.

«մշակութային կազմակերպություն՝ կազմակերպություն, որի ստեղծման հիմնական նպատակը մշակութային գործունեության իրականացումն է.».

2) «մշակութային ոչ առևտրային կազմակերպություն» հասկացությունը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«մշակութային ոչ առևտրային կազմակերպություն՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից ստեղծված մշակութային կազմակերպություն, որի գործունեությունը բխում է պետության կամ համայնքի կողմից իրականացվող մշակութային քաղաքականությունից և ռազմավարությունից.».

3) «մշակութային գործունեությամբ զբաղվող անձ» հասկացությունում «մշակութային կազմակերպությունում» բառերից հետո լրացնել «կամ մշակութային ոչ առևտրային կազմակերպությունում» բառերը.

~~Հոդված 4. Օրենքի 18.1.-ին հոդված 2-րդ եւ 3-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ.~~

~~«2. Մշակույթի ոլորտի պետական ոչ առեւտրային կազմակերպությունների աշխատողների պաշտոնների անվանացանկը, օրինակելի նկարագիրը, ստեղծագործական աշխատողների կարգավիճակը եւ ստեղծագործական աշխատողներին ներկայացվող պահանջները սահմանելու, զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու նպատակով ատեստավորում անցկացնելու, ատեստավորման անցկացման պարբերականությունը, ժամկետները եւ արդյունքների բողոքարկման, ատեստավորման անցկացման համար ատեստավորման հանձնաժողով ձեւավորելու կարգը սահմանում է լիազորված պետական մարմինը։~~

~~«3. Մշակույթի ոլորտի պետական ոչ առեւտրային կազմակերպության ստեղծագործական աշխատողի ատեստավորման արդյունքը հիմք է պաշտոնային դրույքաչափի ավելացման եւ հավելավճարի սահմանման համար։ Ատեստավորման արդյունքներով դրույքաչափերի ավելացման եւ հավելավճարի սահմանման դեպքերը, պայմանները եւ չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը։»։~~

~~Հոդված 5. Օրենքի 18.1.-ին հոդվածի 4-րդ, 5-րդ, 6-րդ եւ 7-րդ մասերը ուժը կորցրած ճանաչել։~~

Հոդված 2. Օրենքի 18.1.-ին հոդվածում՝

1) 2-րդ և 3-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ.

«2. Մշակութային պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների պաշտոնների անվանացանկը, օրինակելի նկարագիրը, ստեղծագործական աշխատողների կարգավիճակը և ստեղծագործական աշխատողներին ներկայացվող պահանջները սահմանելու, զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունը ստուգելու նպատակով ատեստավորում անցկացնելու, ատեստավորման անցկացման պարբերականությունը, ժամկետները և արդյունքների բողոքարկման, ատեստավորման անցկացման համար

ատեստավորման հանձնաժողով ձևավորելու կարգը սահմանում է լիազորված պետական մարմինը:

«3. Մշակութային պետական ոչ առևտրային կազմակերպությունների աշխատողների զբաղեցրած պաշտոնին համապատասխանությունն ստուգելու նպատակով լիազորված պետական մարմնի սահմանած կարգով տվյալ կազմակերպությունը իրականացնում է ատեստավորում, եթե տվյալ ոլորտը կարգավորող օրենքով այլ բան սահմանված չէ: Մշակութային պետական ոչ առևտրային կազմակերպության ստեղծագործական աշխատողի ատեստավորման արդյունքը հիմք է պաշտոնային դրույքաչափի ավելացման և հավելավճարի սահմանման համար: Ատեստավորման արդյունքներով դրույքաչափերի ավելացման և հավելավճարի սահմանման դեպքերը, պայմանները և չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4.1-ին և 4.2-րդ մասերով.

«4.1. Մշակութային պետական ոչ առևտրային կազմակերպության ստեղծագործական աշխատողի ատեստավորման ենթակա չէ՝

1) տվյալ պաշտոնը մեկ տարուց պակաս ժամկետով զբաղեցնող ստեղծագործական աշխատողը.

2) հղի կամ մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող ստեղծագործական աշխատողը, եթե նա նման հայտ չի ներկայացրել:»:

4.2. Հղի և մինչև երեք տարեկան երեխայի խնամքի համար արձակուրդում գտնվող ստեղծագործական աշխատողը մշակութային պետական ոչ առևտրային կազմակերպության ստեղծագործական աշխատողի ատեստավորման ենթակա է արձակուրդից վերադառնալուց ոչ շուտ, քան մեկ տարի հետո, եթե նա ավելի վաղ ատեստավորվելու հայտ չի ներկայացրել:».

3) 4-րդ մասում «մշակույթի ոլորտի» բառերը փոխարինել «մշակութային» բառով:

4) 7-րդ մասում «մշակույթի ոլորտի» բառերը փոխարինել «մշակութային» բառով:

5) 5-րդ և 6-րդ մասերը ուժը կորցրած ճանաչել:

~~Հոդված 6. Օրենքի 21-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ կետի «մշակութային կազմակերպությունների» բառերը փոխարինել «մշակութային ոչ առեւտրային կազմակերպությունների» բառերով:~~

~~Հոդված 7. Օրենքի 21-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ եւ 9-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել:~~

~~Հոդված 8. Օրենքի 21-րդ հոդվածի առաջին մասի 7-րդ եւ 11-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ եւ լրացնել նոր 12-րդ կետով.~~

~~«7) հաստատում է պետական բյուջեով նախատեսված մշակութային ծրագրերի եւ միջոցառումների ֆինանսավորման կարգը.»~~

~~«11) աջակցում է պետություն-մասնավոր համագործակցությունը.»:~~

~~«12) հաստատում է մշակութային կազմակերպությունների կամ մշակութային միջոցառումների ֆինանսավորման փորձնական մոդելների ներդրման ծրագրեր:»:~~

Հոդված 3. Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասում՝

1) 3-րդ կետի «մշակութային կազմակերպությունների» բառերը փոխարինել «մշակութային ոչ առևտրային կազմակերպությունների» բառերով.

2) 6-րդ և 9-րդ կետերը ուժը կորցրած ճանաչել:

3) 7-րդ և 11-րդ կետերը շարադրել նոր խմբագրությամբ և լրացնել նոր 12-րդ կետով.

«7) հաստատում է պետական բյուջեով նախատեսված մշակութային ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման կարգը.»

«11) աջակցում է պետություն-մասնավոր համագործակցությունը.»:

«12) հաստատում է մշակութային կազմակերպությունների կամ մշակութային միջոցառումների ֆինանսավորման փորձնական մոդելների ներդրման ծրագրեր:»:

Հոդված ~~9~~ 4. Օրենքի 22-րդ հոդվածի **~~երկրորդ~~ 2-րդ** մասի 11-րդ կետի «:» նշանը փոխարինել «.» նշանով եւ լրացնել նոր 12-րդ եւ 13-րդ կետերով.

«12) սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող մշակութային միջոցառումների անցկացման հետ կապված ծախսերի նորմատիվները.»

«13) հաստատում է միջազգային միջոցառումներին եւ նախագծերին մասնակցելու համար անհատ կատարողներին, ստեղծագործողներին, մշակույթի գործիչներին եւ ստեղծագործական խմբերին Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված աջակցություն տրամադրելու կարգը եւ չափորոշիչները:»:

Հոդված ~~10~~ 5. Օրենքի 26.1-րդ հոդվածի 1-ին մասում «մշակութային առանձին կազմակերպությունների» եւ 2-4-րդ մասերում «մշակութային կազմակերպություններին» բառերը փոխարինել «մշակութային ոչ առեւտրային կազմակերպություններին» բառերով:

Հոդված ~~11~~ 6. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերն ընդունվում են օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 9 ամսվա ընթացքում: